



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

Superintendent
Matt Hill, Ed.D.

May 6, 2021

ԲԴՄՇ-ի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ.

Մենք շատ ուրախ ենք, որ ապրիլի 12-ից սկսած ավելի շատ աշակերտներ և աշխատակիցներ են վերադառնալու դպրոց: Սա մեր անցած ուղու հաջորդ քայլն է աշակերտներին լրիվ դրույթով դպրոց վերադարձնելու համար: Ապագա 7 շաբաթների ընթացքում, բոլոր աշակերտները կշարունակեն առցանց դասերը հեռակա մոդելով, իսկ այն աշակերտները, ովքեր ընտրել են հիբրիդ մոդելը՝ կեսօրից հետո կհաճախեն դպրոց: Կեսօրից հետո դասընթացները կօգնեն աշակերտներին աջակցություն ստանալ: Աշակերտների մի մասը աջակցություն կստանա կարգապահության և/կամ սոցիալ հուզական կարիքները բավարարելու համար: Մեր նպատակն է ներգրավել աշակերտներին լրացուցիչ դասեր ստանալու համար: Յուրաքանչյուր դպրոց հավելյալ տեղեկություն կհատկացնի ձեզ համար այդ դպրոցի վերաբացման վերաբերյալ: Առանձնահատուկ հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք դիմել դպրոցին:

ԲԴՄՇ-ի COVID -ի առողջապահության և անվտանգության փաստաթղթերի հետ ծանոթանալու համար, խնդրում ենք սեղմել այստեղ. <https://www.burbankusd.org/Page/3080>

Մենք շատ ուրախ ենք, որ նահանգապետ Գավին Նյուսոմը ցանկանում է ամբողջությամբ բացել Կալիֆոռնիայի նահանգի տնտեսությունը մինչև [հունիսի 15](#)-ը, եթե պատվաստանյութի պաշարը բավականացնի և հիվանդանոցներում նոր վարակվածների թիվը նվազի: Այս հայտարարությամբ նահանգապետ Նյուսոմն ասաց, որ դպրոցները պետք է պատրաստվեն աշնանն անձամբ հաճախելու համար և հետևեն Cal/OSHA արտակարգ իրավիճակի ժամանակավոր չափանիշներին և հանրային առողջապահության գրասենյակի հրահանգներին: Ապագա մի քանի շաբաթների ընթացքում մենք կշարունակենք սովորել և բարելավել մեր պրակտիկան, որ կարողանանք աշնանը բացել դպրոցները:

Կալիֆոռնիայի հանրային առողջապահության գրասենյակը [տարեվերջյան ավարտական և փոխադրման հանդեսների ուղղորդումներ է](#) հրապարակել: Ապագա մի քանի շաբաթների ընթացքում դուք հավելյալ տեղեկություն կստանաք ձեր երեխայի դպրոցից:

Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ որոշ աշակերտների հարկավոր կլինի լրացուցիչ աջակցություն ստանալ մինչև դպրոց վերադառնալը: Բոբենքի ընտանեկան ծառայությունների գործակալությունը կշարունակի առցանց խորհրդատվություն

հատկացնել: Բաց կլինեն նաև միջնակարգ դպրոցներում գործող աշակերտների խնամքի կենտրոնները: Հավելյալ տեղեկությունների համար, խնդրում ենք զանգահարել 818-845-7671 հեռախոսահամարին:

Աշխատելով միասին մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ
Գերատեսուչ